

միայն Մոգերու Զրոյցը գեղարուեստից մէջ :

Դարձեալ որչափ որ ինքը համեստութեամբ կը յայտարարէ թէ մէկ անձի մը միայն տրուած չէր մէն միայնակ այսպիսի ընդարձակ ծրագիր մը ամենայնով կերպով և կատարելապէս ի գլուխ հանել, սակայն և այնպէս մինը կրնանք մինչև հիմայ եղածներէն յաջողն և կատարեալը համարել զայն : յուստի նա իւր տաղանդի և անխոնջ աշխատութեան այս առաջին երախայրիքով արժանաւոր ձոն մ'է որ կ'ընծայէ իր զոյգ Մեկենասներուն, իսկ գիտութեան և պատմութեան մատուցած ծառայութեան համար մենք ևս շնորհակալու ենք իրեն — և իրեն հետ նաև իր երկերը այնքան խնամքով Տպողին և մարմնագործին՝ որ ամենայն իրօք յաջող և շքեղ գործած է սպագրութիւնը : Համակրանքով զասի ողջունած ժամանակ՝ սրտագին կը շնորհաւորենք, որ նման ուրիշ աշխատասիրութիւններով ևս քան զես հոչակէ իր համբաւը : Ի նմին ժամանակի կը յուսանք թէ մերազգի գիտանք և գեղարուեստասէրք եւ ձեռք կը բերեն այդ մեծապէս շահագրգիռ հրատարակութիւնը և օգուտներ կը քաղեն անկէ : —

Հ. Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ամէն խօսք, ամէն բերնի վայել չէ՝ ինչպէս ամէն զգեստ՝ ամէն մարդու չի յարմարիր :

Ո՛վ որ կ'ուզէ՝ ճշմարիտ բարեկամ մը ունենալ և պահել՝ հետեւեալ երեք բանը գործադրելու է. «Պատուել զինքը՝ ներկայութեանը միջոց. բացակայութեանը միջոց՝ զովել. պիտոյիցը միջոց օգնել :

Ճշմարտութիւնը պէտք չէ ուրանալ՝ բայց կան ճշմարտութիւնք զոր լաւ է՝ չքարոզել :

Ո՛վ որ ժամանակ ունի՝ ժամանակի չի սպասեր :

Կ'ուզեն որ վրադ լաւ խօսուի. բնաւ քու վրայ լաւ մի խօսիր. ես արհամարհելի է :

Կրցածդ՝ չուտով կատարէ :

Վ Ա Ղ Ո Ի Ա Ն Հ Ա Յ Ը

«ՀԱՅԲ ՄԵՐ»Ի ՄԷՋ

Ղփտի Եկեղեցւոյ մէջ, ի պաշտաման Ս. Պատարագի, Հայր մերի ընթերցուածը սոյնպիսի կերպով կը բացատրէ հացի հայցուածը.

Բնն-Օ՛ր	'ՏԵՐ ԲԱՍՏ
մեր հացը	վաղուան
Մի՛ եմ հԱՆ	'ՄՓՈ՛ր
սուր զայն մեզի	այսօր

Կը համարինք որ չենք սխալիր ըսելով, թէ մինչև ցարդ ի կիրառութեան եղող Հայր մերի ընթերցուածոց մէջ, միայն Ղփտի և Արար ընթերցուածներն են որ վաղուան հացը՝ այսօրուան համար խնդրելու բացատրութիւնը կը գործածեն :

Արդ արժանի կը համարինք այսպիսի եզակի բացատրութեան մը վրայ համառօտել խօսել :

*
* *

Հայր մերի բնագիրը տրուած է մեզ Մատթէի Զ և Ղուկասու ԺԱ գլուխներուն մէջ

Մատթ. Զ. 11. τὸν ἄρτον ἡμῶν τὸν ἐπιούσιον ὁδὸς ἡμῖν σήμερον.

Ղուկ. ԺԱ. 3. τὸν ἄρτον ἡμῶν τὸν ἐπιούσιον διδοὺς ἡμῖν τὸ καθ' ἡμέραν.

Ահաւասիկ հին Թարգմանութիւններէն գլխաւորները՝ ἄρτον ἐπιούσιον բացատրութեան, որ սոյն առթիւ միայն գործածուած է ի սուրբ Գիրս :

Լատին Թարգմանութիւն «panem supersubstantialem» : (Զհացն գերազույակ) :

Ասորի Թարգմանութիւն, Զհաց մերոյ կարօտութեան :

Ղփտի և արար Թարգմանութիւնք. Զհաց վաղուեան :

1. Կը քաղենք վաղին Բագմալեղանեան Ս. Գիրքին. Հա. Ա. (Մատթ. Զ.) ի բաց առեալ Հայերէնը և Ղեփ-տիէնը զոր հրատարակած է Լակարս :
2. Աւափեմք ի Մատթ. Զ.